ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ՇԻՐԱԿԻ ՓՈՂՈՑԻ Հ.2Ա/2 ՇԵՆՔԻ Հ. 804 ԲՆԱԿԱՐԱՆՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 648-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Շիրակի փողոցի հ.2ա/2 շենքի հ.804՝ 49.3 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 01.08.2016թ. N01082016-01-0189 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Գագիկ, Պետրոս, Ռոզա Մկրտչյաններին և Մարինե Հովհաննիսյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԻՐԱԿԻ ՓՈՂՈՑԻ Հ.2Ա/2 ՇԵՆՔԻ Հ.804 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագծով առաջարկվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի փողոցի հ.2ա/2 շենքի հ.804՝ 49.3 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով, անհատույց օտարել (նվիրել) Գագիկ, Պետրոս, Ռոզա Մկրտչյաններին և Մարինե Հովհաննիսյանին:

Շիրակի փողոցի հ.2ա/2 շենքի հ.804 բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 01.08.2016թ. N01082016-01-0189 վկայականի տվյալների հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Գագիկ, Պետրոս, Ռոզա Մկրտչյանները և Մարինե Հովհաննիսյանը սկսած 2001 թվականից համատեղ բնակվում են Շիրակի փողոցի հ.2ա/2 շենքի հ.804 հասցեում գտնվող բնակարանում /հիմք՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի «Չարբախ» համատիրության կառավարչի կողմից հաստատված 24.11.2017թ. հ.03/714 տեղեկանք/: Համաձայն բնակչության պետական ռեգիստրի հաշվառման մասին տրված 25.08.2017թ. հ.22/1-4577 տեղեկանքի՝ Գագիկ և Ռոզա Մկրտչյանները 2009 թվականից, Պետրոս Մկրտչյանը և Մարինե Հովհաննիսյանը 2012 թվականից հաշվառված են վերը նշված հասցեում: Քննարկվող բնակարանը փաստացի օգտագործվում է նշված անձանց կողմից, սակայն իրավահաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով հնարավորություն չեն ունեցել այն սեփականաշնորհել:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստորաբաժանման 07.11.2017թ. հ.հ. ԱՏ-03/11/2017-4-0009, ԱՏ-03/11/2017-4-0011, ԱՏ-03/11/2017-4-0012 և ԱՏ-03/11/2017-4-0013 տեղեկանքների տվյալների համաձայն՝ Գագիկ, Պետրոս, Ռոզա Մկրտչյանների և Մարինե Հովհաննիսյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և վերջին հինգ տարիների ընթացքում վերջիններիս կողմից անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ. 648-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ. 648-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ փաստական հանգամանքները, ուստի վերոհիշյալ ընտանիքի անդամների սեփականության իրավունքը տարիներ շարունակ զբաղեցրած բնակարանի նկատմամբ ձևակերպելու համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԻՐԱԿԻ ՓՈՂՈՑԻ Հ.2Ա/2 ՇԵՆՔԻ Հ.804 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Շիրակի փողոցի հ.2ա/2 շենքի հ.804 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԻՐԱԿԻ ՓՈՂՈՑԻ Հ.2Ա/2 ՇԵՆՔԻ Հ.804 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Շիրակի փողոցի հ.2ա/2 շենքի հ.804 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ